

1.3. *Գներ և սակագներ*

Գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների 2006թ. հունվար-փետրվարին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս ⁶⁾
Հունվար	103.6	97.8	100.3	99.1 ⁺	99.1	101.4
Փետրվար	100.2	99.2	100.1	100.0	101.5	101.6
Փետրվարը 2005թ. դեկտեմբերի նկատմամբ	103.8	97.0	100.4	99.1	102.0	102.4
2006թ. հունվար-փետրվարը 2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ	98.5	95.5	114.5	97.2	104.8*)	105.5*)

*) 2006թ. փետրվարի և 2005թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության մարզերում 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

²⁾ Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով: Գների ինդեքսի հաշվարկը կատարվում է ժողտնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչի (ԺՏԵՀԴ) համաձայն: Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին (ՏԳՏԴ) համապատասխան գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը նշակման փուլում է:

³⁾ Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:


⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

⁵⁾ Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁶⁾ Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

Գների, սակագների աճի տեմպերը 2005-2006թթ. հունվար-փետրվարին

(նախորդ տարվա հունվար-փետրվարի նկատմամբ, %)




Արտաթուրային շուկա: 2006թ. փետրվարին հունվարի համեմատ հանրապետության սպառողական շուկայում արձանագրված 0.2% գնաճն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.4% նվազումով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է սպառողական գների ու հաշվարկային փոխարժե-

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

քի համապատասխանաբար 0.7% և 3.7% նվազում: 2006թ. փետրվարին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 450.11 դրամ, ինչը 4.9% ցածր է նախորդ տարվա փետրվարի համապատասխան ցուցանիշից (473.39 դրամ):

Սպառողական զմեռ: 2006թ. հունվար-փետրվարին ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է 3.8% ընդհանուր զնաճ, այդ թվում՝ փետրվարին հունվարի նկատմամբ զնաճը կազմել է 0.2%:

Սպառողական զմեռի հավելվածը 1997-2006թթ. փետրվարին
(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)




Սպառողական զմեռի փոփոխությունները 2006թ. փետրվարին

(%)

	2006թ.				հունվար-փետրվարը 2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ
	փետրվարը				
	2006թ. հունվարի նկատմամբ	2005թ. դեկտեմբերի նկատմամբ	2005թ. փետրվարի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Սպառողական զմեռի ինդեքս	100.2	103.8	98.9	115.9	98.5
<i>այդ թվում՝</i>					
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	100.2	105.4	97.3	121.4	97.0
ոչ պարենային ապրանքների	100.1	100.1	101.7	105.0	101.5
ծառայությունների	100.3	100.4	103.6	105.5	102.7

ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների զմեռի և ծառայությունների սակագների փոփոխությունները 2006թ. հունվար-փետրվարին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)



1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Պարենային ապրանքների գներ: 2006թ. հունվար-փետրվարին պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 5.9% գնաճ, այդ թվում՝ փետրվարին գնաճը կազմել է 0.2%: Դիտարկվող պարենային 13 ապրանքախմբերից 8-ում գրանցվել է 0.1-8.4% գնաճ, 4-ում՝ 8.5-0.3% գնանկում, իսկ 1-ում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:


Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(%)

	2006թ.				հունվար-փետրվարը 2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ
	փետրվարը				
	2006թ. հունվարի նկատմամբ	2005թ. դեկտեմբերի նկատմամբ	2005թ. փետրվարի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	100.2	105.4	97.3	121.4	97.0
Պարենային ապրանքներ	100.2	105.9	97.0	123.7	96.6
հացամթերք	100.1	100.0	96.3	120.4	96.0
մսամթերք	99.1	100.3	103.5	127.4	102.5
ծկնամթերք	106.6	117.5	67.8	213.2	69.6
կաթնամթերք	99.7	100.6	100.7	108.9	100.6
ձու	91.5	95.7	93.9	127.0	96.7
կենդանական և բուսական յուղ	100.3	100.1	98.0	109.6	98.3
միրգ	96.9	120.3	82.6	132.3	82.8
բանջարեղեն և կարտոֆիլ	103.4	139.9	100.9	142.8	98.6
շաքարավազ	108.4	109.3	108.2	106.3	103.6
սուրճ, թեյ, կակաո	100.9	101.0	103.4	106.4	103.0
հրուշակեղեն	100.0	100.1	100.3	107.7	100.3
այլ մթերքներ	100.2	100.5	114.8	116.9	114.8
ոչ ոգելից խմիչք	100.2	100.3	103.0	116.6	103.7
Ոգելից խմիչք և ծխախոտ	100.2	100.4	100.7	101.6	100.7

Հացամթերքի, այդ թվում հացի և ալյուրի գների փոփոխությունները 2003-2006թթ.

(2002թ. նկատմամբ, %)




2006թ. փետրվարին հունվարի համեմատ նկատելիորեն աճել է շաքարավազի միջին հանրապետական գինը (8.4%): Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է շաքարավազի 3.2-14.1% գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Դիլիջանում: Մայրաքաղաքում շաքարավազի գնաճը կազմել է 8.5%:

Զկնամթերքի ապրանքախմբում 2006թ. փետրվարին հունվարի համեմատ գրանցվել է 6.6% գնաճ, ինչը թարմ և ապխտած «սիգ» տեսակի ձկան համապատասխանաբար 6.6% և 8.5% գնաճի արդյունք է: Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում գրանցվել է ձկնամթերքի 2.5 - 36.6% գնաճ (գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ արձանագրվել է ք. Վաղարշապատում), իսկ Երևան և Վանաձոր քաղաքներում՝ համապատասխանաբար 0.2% և 1.1% գնանկում:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ


2006թ. փետրվարին հունվարի համեմատ հանրապետությունում գրանցվել է բանջարեղենի և կարտոֆիլի 3.4% գնաճ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 1.2% գնանկում): Նշված ժամանակահատվածում արձանագրվել է ճակնդեղի (8.6%), գազարի (9.2%), սխտորի (10.1%), կարտոֆիլի (13.4%), կանաչ պղպեղի (28.3%), կաղամբի (29.1%) գնաճ: Միաժամանակ, հանրապետությունում գրանցվել է վարունգի (28.0%), լոլիկի (13.4%), գլուխ սոխի (4.8%) գնանկում: Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում բանջարեղենի և կարտոֆիլի գներն աճել են 1.7-13.0% (գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ արձանագրվել է ք. Դիլիջանում): Մայրաքաղաքում բանջարեղենի և կարտոֆիլի գնաճը կազմել է 2.3%, իսկ Գյումրի և Վանաձոր քաղաքներում արձանագրվել է համապատասխանաբար 1.5% և 1.6% գնանկում:

Բանջարեղենի և կարտոֆիլի գների փոփոխությունները 2004-2006թթ. հունվար-փետրվարին
(նախորդ ամսվա նկատմամբ, %)



Մրգի ապրանքախմբում 2006թ. փետրվարին հունվարի համեմատ գրանցվել է 3.1% գնանկում, ինչը 0.6 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (2.5% գնանկում): Նշված ժամանակահատվածում արձանագրվել է խաղողի (5.3%), խնձորի (3.1%), ինչպես նաև ներմուծված (ցիտրուսային և արևադարձային) մրգից՝ նարնջի (14.7%), աղամաթղի (10.8%), կիտրոնի (0.8%) գնանկում: Հանրապետության դիտարկված 7 քաղաքներում արձանագրվել է մրգի 4.3-0.1% գնանկում (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է մայրաքաղաքում), իսկ մյուս 3-ում՝ 2.0-4.7% գնաճ:

Մրգի գների փոփոխությունները 2004-2006թթ. հունվար-փետրվարին
(նախորդ ամսվա նկատմամբ, %)



Մսամթերքի ապրանքախմբում 2006թ. փետրվարին հունվարի համեմատ գրանցվել է 0.9% գնանկում, հիմնականում պայմանավորված խոզի (4.9%), ոչխարի (0.9%) մսի

1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

գնանկումով: Տավարի և թռչնի մսի գնանկումը նշված ժամանակահատվածում կազմել է 0.1%: Հանրապետության դիտարկված քաղաքներից 7-ում մսամթերքի գնանկումը կազմել է 1.5-0.5% (գնանկման համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է մայրաքաղաքում), իսկ մյուս 3 քաղաքներում գրանցվել է 0.1-4.3% գնաճ:

Ոչ պարենային ապրանքների գներ: 2006թ. փետրվարին 2005թ. դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցված 0.1% գնաճը 0.4 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (0.5%):

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները


(%)

	2006թ.				հունվար-փետրվարը 2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ
	փետրվարը				
	2006թ. հունվարի նկատմամբ	2005թ. դեկտեմբերի նկատմամբ	2005թ. փետրվարի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Ոչ պարենային ապրանքներ այդ թվում՝	100.1	100.1	101.7	105.0	101.5
հագուստ և կտորեղեն	100.1	100.6	100.3	99.9	100.1
վառելիք	99.9	100.3	96.1	152.3	97.0
կահույք	100.0	100.4	99.8	89.7	99.3
գորգեղեն	100.2	100.3	101.0	103.3	100.9
տեքստիլեղեն	100.6	100.7	100.1	99.2	99.8
կենցաղային էլեկտրաապրանքներ	100.1	100.2	99.4	89.0	100.0
խոհանոցային սպասք	100.2	100.3	101.4	100.3	101.0
լվացամիջոցներ	100.2	100.2	105.0	107.7	104.9
շինանյութեր	100.1	100.1	102.2	99.1	102.1
այգեգործական ապրանքներ	100.2	99.9	102.4	111.3	102.4
դեղամիջոցներ	100.0	99.9	97.0	89.7	96.9
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	99.8	97.2	112.4	132.4	111.0
մշակույթի ապրանքներ	99.7	99.6	100.4	84.5	100.9
գրենական պիտույքներ	100.2	100.3	105.8	107.3	105.7
զեղահարդարման ապրանքներ	100.1	100.3	100.1	102.2	100.0
ոսկերչական ապրանքներ	104.8	116.1	122.3	147.2	118.4
անձնապիտո ապրանքներ	100.0	100.0	98.9	96.1	98.8

2006թ. փետրվարին հունվարի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի համապատասխանաբար 0.2% և 0.6% գնանկում: 2006թ. փետրվարին 2005թ. փետրվարի համեմատ արձանագրվել է բենզինի և դիզելային վառելիքի համապատասխանաբար 14.9% և 12.1%, իսկ 2002թ. համեմատ՝ 33.3% և 58.7% գնաճ:

Բենզինի և դիզելային վառելիքի գների փոփոխությունները 2003-2006թթ.

(2002թ. նկատմամբ, %)



1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ծառայությունների սակագներ: Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2006թ. փետրվարին 2005թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է սակագների 0.4% հավելաճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված 1.1% նվազման դիմաց:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

	2006թ.				հունվար-փետրվարը 2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ
	փետրվարը				
	2006թ. հունվարի նկատմամբ	2005թ. դեկտեմբերի նկատմամբ	2005թ. փետրվարի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Ծառայություններ, ընդամենը	100.3	100.4	103.6	105.5	102.7
<i>այդ թվում՝</i>					
կենցաղային	100.1	100.1	101.9	100.2	101.9
բնակարանային-կոմունալ	99.8	99.5	101.2	103.8	101.3
բուժսպասարկման	99.6	99.6	101.2	99.9	101.4
տրանսպորտի	100.0	100.0	107.2	105.4	103.8
կապի	104.7	106.4	107.2	113.9	104.1
մշակույթի	109.2	103.8	112.4	174.7	109.6
կրթության համակարգի	100.0	100.7	108.8	110.8	108.6
հանգստի կազմակերպման	100.2	100.7	103.8	103.4	103.1
հանրային սննդի	100.3	101.1	104.2	117.8	104.1
իրավական և բանկային	100.0	100.2	101.4	101.4	101.4

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: Հանրապետությունում դիտարկված 7 քաղաքներում 2006թ. փետրվարին հունվարի համեմատ սպառողական գներն աճել են 0.5-1.7%, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Դիլիջանում: Մայրաքաղաքում արձանագրվել է սպառողական գների 0.2% նվազում, իսկ Գյումրի և Վանաձոր քաղաքներում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

2006թ. փետրվարին հունվարի համեմատ հանրապետության դիտարկվող քաղաքներից 7-ում արձանագրվել է պարենային ապրանքների 0.6-2.7% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք. Դիլիջանում), իսկ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում պարենային ապրանքների գները նվազել են 0.4-0.1%:

Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2006թ. փետրվարի 28-ի դրությամբ

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
ՀՀ, միջինը	1499	1335	1648	624	530	285	181	321	123	418
<i>այդ թվում.</i>										
Երևան	1517	1346	1660	632	535	283	192	309	124	458
Գյումրի	1475	1342	1657	657	522	293	162	366	117	370
Վանաձոր	1533	1283	1495	558	590	272	146	360	129	395
Վաղարշապատ	1500	1300	1620	560	480	276	200	300	143	310
Թալին	1500	1400	1700	600	500	300	190	350	100	350
Դիլիջան	1500	1200	1800	600	525	300	170	350	150	350
Հրազդան, Չարենցավան	1500	1385	1640	620	517	280	170	330	100	290
Եղեգնաձոր	1400	1250	1500	600	500	290	150	300	150	400
Մարտունի	1350	1300	1650	650	500	300	140	325	95	500
Կապան	1400	1340	1660	662	530	292	160	350	132	270
Արտաշատ	1500	1250	1600	577	550	284	180	300	100	375

1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2006թ. փետրվարի 28-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6964 դրամ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է մայրաքաղաքում՝ 7056 դրամ, իսկ ամենացածրը՝ ք. Եղեգնաձորում՝ 6540 դրամ), ինչը 2.9% գերազանցել է նույնանուն ապրանքատեսակների 2005թ. փետրվարի 28-ին արձանագրված ընդհանուր արժեքը (6770 դրամ):

Հանրապետության դիտարկված 7 քաղաքներում 2006թ. փետրվարին հունվարի համեմատ արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.1-0.5% գնաճ (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Թալինում): Մայրաքաղաքում գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.1% գնաճ, ք. Մարտունիում՝ 0.1% գնանկում, իսկ Վանաձոր և Վաղարշապատ քաղաքներում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

2006թ. փետրվարին հունվարի համեմատ հանրապետության դիտարկված 9 քաղաքներում արձանագրվել է ծառայությունների սակագների 0.1-1.4% հավելաճ (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Վանաձորում): Մայրաքաղաքում ծառայությունների սակագների հավելաճը կազմել է 0.1%, իսկ ք. Եղեգնաձորում պահպանվել է ծառայությունների սակագների նախորդ ամսվա մակարդակը:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2006թ. փետրվարին 2005թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի

(%)

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում՝				ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից			
			պարենային ապրանքների	ոգելից խմիչքի և ծխախոտի	ոչ պարենային ապրանքների	
ԴԴ, ընդամենը	103.8	104.5	105.9	100.4	100.1	100.4
<i>այդ թվում՝</i>						
Երևան	103.6	104.3	105.7	100.1	100.2	100.1
Գյումրի	103.8	104.5	106.1	100.5	99.7	100.7
Վանաձոր	104.0	104.4	105.9	100.1	99.9	102.1
Վաղարշապատ	105.1	106.0	107.6	105.4	100.1	100.5
Թալին	102.9	103.4	104.5	100.0	100.5	100.6
Դիլիջան	104.3	105.1	106.9	100.0	99.8	100.5
Հրազդան, Չարենցավան	104.6	105.4	107.3	100.4	100.4	100.8
Եղեգնաձոր	101.5	101.4	101.1	100.6	102.7	102.0
Մարտունի	103.4	104.0	105.5	100.0	99.8	100.6
Կապան	103.8	104.4	106.2	99.6	100.2	101.2
Արտաշատ	104.2	105.0	107.1	98.4	99.9	100.5

Արդյունաբերողների արտադրանքի գներ: 2006թ. փետրվարին 2005թ. դեկտեմբերի համեմատ արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գները նվազել են 3.0%, ինչը ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից 1.7 տոկոսային կետով (4.7%):

Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի

(%)

	2006 թվականի			
	փետրվարը			հունվար-փետրվարը 2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ
	2006թ. հունվարի նկատմամբ	2005թ. փետրվարի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Ամբողջ արդյունաբերությունը	99.2	97.7	146.9	95.5
<i>այդ թվում՝</i>				
էլեկտրաէներգետիկա	97.3	100.8	99.2	101.0
գունավոր մետալուրգիա	98.2	86.0	285.9	81.8


	2006 թվականի			հունվար-փետրվարի 2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ
	փետրվար			
	2006թ. հունվարի նկատմամբ	2005թ. փետրվարի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն	101.3	104.4	132.8	103.2
մեքենաշինություն	102.7	122.0	117.4	117.3
այլ արդյունաբերական արտադրություն (ոսկերչական արդյունաբերություն)	89.3	115.1	130.2	123.7
անտառային, փայտամշակման, թղթ-ցելյուլոզի արդյունաբերություն	103.7	119.4	108.1	116.4
շինանյութերի արդյունաբերություն	100.3	120.0	131.1	120.8
թեթև արդյունաբերություն	97.1	88.3	112.0	103.6
սննդի (ներառյալ ալյուրի ու համակցված կերերի) արդյունաբերություն	102.6	103.6	126.4	101.2
պոլիգրաֆիական արդյունաբերություն	98.4	104.0	117.4	104.8

Քեռնափոխադրումների սակագներ: 2006թ. փետրվարին հունվարի համեմատ հանրապետությունում արձանագրված քեռնափոխադրումների սակագների հարաբերականորեն կայուն մակարդակի պայմաններում օդային տրանսպորտով քեռնափոխադրումների սակագները նվազել են 0.4%: Խողովակաշարային տրանսպորտով քեռնափոխադրումների սակագների հավելաճը նշված ժամանակահատվածում կազմել է 0.1%, իսկ երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտում սակագների մակարդակը մնացել է անփոփոխ:

2006թ. փետրվարին 2005թ. փետրվարի համեմատ քեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 97.7%, այդ թվում, երկաթուղային տրանսպորտով՝ 97.1%, ավտոմոբիլայինով՝ 105.9%, օդայինով՝ 105.5%, խողովակաշարային տրանսպորտով՝ 92.3%, իսկ հունվար-փետրվարին 2005թ. հունվար-փետրվարի համեմատ՝ համապատասխանաբար 97.2, 96.4, 105.0, 104.3, 92.3%:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գներ: 2006թ. փետրվարին հունվարի համեմատ հանրապետությունում գրանցվել է գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված գյուղատնտեսական մթերքի 1.5% գնաճ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 1.6% գնանկում), ինչը մթերող կազմակերպություններին և անհատ քաղաքացիներին իրացված գյուղատնտեսական մթերքի համապատասխանաբար 1.6% և 1.8% գնաճի արդյունք է:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսները ՀՀ մարզերում 2006թ. փետրվարին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի (նախորդ ամսվա նկատմամբ, %)



1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2006թ. փետրվարին 2005թ. փետրվարի համեմատ գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը կազմել է 105.1%, այդ թվում, բուսաբուծական մթերքինը՝ 123.0%, անասնապահական մթերքինը՝ 100.1%, իսկ հունվար-փետրվարին 2005թ. հունվար փետրվարի համեմատ՝ համապատասխանաբար 104.8, 118.7 և 101.1%:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման միջին գները ՀՀ-ում
2001-2006թթ. փետրվարին

	Չափի միավորը	2001	2002	2003	2004	2005	2006
Ցորեն	կգ	106	105	90	151	99	89
Գարի	- „,-	90	99	82	120	98	103
Լոբի	- „,-	425	427	395	366	407	433
Կարտոֆիլ	- „,-	113	120	146	84	75	120
Կաղամբ	- „,-	86	34	46	55	47	45
Գազար	- „,-	52	43	50	80	73	82
Գլուխ սոխ	- „,-	218	144	192	200	200	203
Խնձոր	- „,-	125	125	153	127	145	147
Տանձ	- „,-	127	144	239	192	143	159
Խաղող	- „,-	150	...	281	282
Ընկույզ (կեղևով)	- „,-	803	907	909	862	...	845
Մեղր	- „,-	2674	2732	2492	2521	2580	2616
Միս տավարի	- „,-	819	884	908	1005	1160	1178
Միս ոչխարի	- „,-	804	838	938	842	1124	1174
Միս խոզի	- „,-	1095	979	818	1329	1506	1398
Կաթ	լ	110	104	113	113	112	115
Պանիր (յուղոտ)	կգ	856	800	827	831	902	891
Մածուն	- „,-	182	186	182	183	184	188
Չուլ	հատ	45	45	46	48	49	47
Միամյա խոտեր	կգ	34	18	20	29	27	25
Բազմամյա խոտեր	- „,-	27	28	27	26	25	38

... _ դիտարկված տնտեսություններում իրացում (վաճառք) չի կատարվել

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներն ըստ մարզերի

	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը	
	2006թ. փետրվարին		2006թ. փետրվարին	
	2006թ. հունվարի նկատմամբ	2005թ. փետրվարի նկատմամբ	2006թ. հունվարի նկատմամբ	2005թ. փետրվարի նկատմամբ
ՀՀ, ընդամենը	101.5	105.1	101.6	105.6
<i>այդ թվում</i>				
Արագածոտն	88.4	104.1	100.7	106.9
Արարատ	100.3	89.0	100.8	102.0
Արմավիր	99.6	102.6	100.6	102.0
Գեղարքունիք	101.1	128.4	100.2	107.4
Լոռի	102.6	99.4	101.0	105.7
Կոտայք	97.8	110.7	102.3	110.2
Շիրակ	101.8	110.0	100.5	101.4
Սյունիք	102.3	105.1	98.0	104.0
Վայոց ձոր	97.0	101.9	98.3	108.3
Տավուշ	101.9	96.1	103.3	110.0